խեղճի տունը հրդեհեցին եւ ինքը մեռաւ բանտի մէջ: Ես գիտեմ մի օրիորդ, որին խանի որդին դաշտումը հանդիպելով, ասել էր՝ «աղջիկ, ի՞նչ լաւ են քո աչքերը»: Միւս օրը, երբ եկան նոյն աղջկան տանելու խանի որդու համար, գտան երկու աչքով եւս կոյր: Օրիորդն ինքն էր կուրացրել իր աչքերը, գուցէ դրանով կարողանայ ազատել իր պատիւը: Իսկ այսպիսի օրիորդ եւ այնպիսի հայր շատ քիչ էին գտնւում. մեծ մասը ենթարկւում էր կատաղի բռնաբարութեան... Կորուստը մեծ էր, որովհետեւ մի անգամ մահմեդականի հարեմ-խանայում ներս տարած հայ կնոջը էլ այնտեղից դուրս չէին թողնում: Խանը իր հաճութիւնը կատարելուց յետոյ ամուսնացնում էր նրան իր սպասորներից մէկի հետ, ինչպէս նա իր հնացած հագուստը պարգեւում էր այս եւ այն ծառային որպէս խալաթ:

Թէ բռնի եւ թէ կամաւոր կերպով, մի անգամ մահմեդականութիւն ընդունող մարդը, շարիաթի օրէնքով, կրկին վերադառնալ դէպի իր նախկին կրօնքը չէր կարող: Եթէ տղամարդ էր նա, ամէն մի մահմեդական նրան հանդիպելիս, իրաւունք ունէր սպանելու, իսկ եթէ կին էր, պէտք է դնէին նրան բանտում եւ այնքան տանջէին, մինչեւ կրկին խոստովանուէր, թէ ընդունում է իսլամը:

Ղզըլբաշ-թուրքերը ազգային գրականութիւն չունէին, բայց արաբական եւ պարսից դպրութիւնը շատ ծաղկած էր նրանց մէջ: Գիւղերը եւ քաղաքները լիքն էին մզկիթներով, եւ իւրաքանչիւր մզկիթին կից կար մի վարժատուն: Բացի մօլլաներից, աշխարհական մարդը դասատուութիւն անելու իրաւունք չունէր. այս պատճառով ուսումը եւ դաստիարակութիւնը ժողովրդի մէջ ընդունել էր կրօնական բնաւորութիւն: Հին սերունդը մոլորած էր կրօնքի ֆանատիկոսութեան մէջ, այն կրօնքի, որ բացի իրանից չէր համբերում ուրիշ դաւանութիւններին: Նոր սերունդը ընթանում էր նոյն ուղղութեամբ, որովհետեւ առաջնորդող անձինքը մօլլաներն էին: Այստեղից հասկանալի է թուրքերի եւ պարսիկների հալածասիրութիւնը այլադաւանների վերաբերութեամբ:

Հալածանքներին վիճակակից էին բացի հայերից եւ ասորիները, հրէաները եւ բոշաները:

Բացի մօլլաներից, կային եւ սէիդներ, նրանք համարւում էին մեծ մարգարէի որդիներ: Ժողովրդի այս դատարկապորտ, ծոյլ եւ անգործ դասը ապրում էր տասնորդներով, որ ամէն մի մահմեդականի պարտաւորութիւնն էր վճարել նրանց: Ոչ մի օրէնք չէր սահմանափակում նրանց բռնութիւնները, որովհետեւ նրանք օրէնք տոողի-մուհամմեդի-անմեղանչական որդիքն էին: Ոչ միայն այլադաւանները, այլ իրանք մահմեդականները չափազանց նեղո-